



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

№ ԱԽ-1-Ո-2  
2017թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱՎՈՐ ԳՐԻՇԱ ՀԱՄԲԱՐՉՈՒՄԻ ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝  
ՊԱՇՏՈՆՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՔԸ ԼՐԱՆԱԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ  
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝**

*նախագահությամբ՝*

*Ա. Մկրտումյանի*

*մասնակցությամբ ԱԽ անդամներ՝*

*Ա. Բաբայանի, Գ. Բաղիրյանի,  
Ռ. Բարսեղյանի, Ա. Դարբինյանի,  
Գ. Խանդանյանի, Ս. Հարթենյանի,  
Գ. Ղազինյանի, Ս. Չիչոյանի,  
Ե. Սողոմոնյանի, Վ. Ստեփանյանի,  
Ս. Օհանյանի*

*քարտուղարությամբ՝*

*Շ. Վարդանյանի*

2017 թվականի հունվարի 25-ին քաղաք Երևանում՝ Արդարադատության խորհրդի նիստում, քննարկելով Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Գրիշա Համբարձումի Մելիք-Սարգսյանի լիազորությունները՝ պաշտոնավարման տարիքը լրանալու կապակցությամբ դադարեցնելու վերաբերյալ հարցը, և ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասով, 4-րդ մասի 2-րդ կետով և 5-րդ մասով,

**Ո Ր Ո Շ Ե Ց**

Առաջարկել Հայաստանի Հանրապետության Նախագահին՝ 2017 թվականի հունվարի 31-ից դադարեցնել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Գրիշա Համբարձումի Մելիք-Սարգսյանի լիազորությունները՝ պաշտոնավարման տարիքը լրանալու կապակցությամբ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ**